**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

11 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 49

## 06-033-0037-0014 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ , ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ կետով, 59-րդ հոդվածի 3-րդ կետով, 60-րդ հոդվածով և 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ կետերով, ՀՀ կառավարության պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին 12/04/2001թ. թիվ 286 որոշման «է» կետով, ՀՀ Կառավարության 08/05/2003թ. թիվ 714-Ն որոշման «է» կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն որոշումամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածը, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածքվ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ 510-Ն օրենքով, «Վանաձորի քիմգործարան» Բ/Ը-ի կողմից տրամադրված սեփականաշնորհման վկայագիրը, ըստ որի բնակարանը/ քոթեջը/ պատկանում է Գագիկ Ծատուրյանին/ 1957թ./, Լիանա Ծատուրյանի / ծնվ. 1958թ./, Գայանե Ծատուրյանի / ծնվ. 1979թ./ և Վարդան Ծատուրյանի / ծնվ. 1983թ./, Լիլիթ Ծատուրյանի /1992թ./, իսկ բնակելի տան / քոթեջի/ զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 06-033-0037-0014 կադաստրային ծածկագրից բնակավայրերի նպատակային նշանակության 0.04202 հա մակերեսով բնակելի, բնակելի կառուցապատման հողամասը համապատասխանում է ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված պահաջներին, ընդգրկված չէ ՀՀ Հոաղային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանապակումների ցանկին, այն որ սեփականաշնորհված բնակարանը / քոթեջը/ իրենից ներկայացնում է երկրաշարժից տուժած համայնքում քաղաքացիներին օրենքով սահմանված կարգով սեփականաշնորհած, սակավաբնակարան բնակելի տուն /քոթեջ /և հիմք ընդունելով «Գ.Վեքիլյան» Ա/Ձ-ի կողմից հաստատված հողամասի հատակագիծը և Գագիկ Գառնիկի Ծատուրյանի դիմումը.
Որոշում եմ.

1.Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Գագիկ Ծատուրյանի /ծնվ. 1957թ./ , Լիանա Ծատուրյանի / ծնվ. 1958թ./, Գայանե Ծատուրյանի / ծնվ. 1979թ./ և Վարդան Ծատուրյանի / ծնվ. 1983թ./, Լիլիթ Ծատուրյանի /1992թ./ անհատույց սեփականության իրավունքը 06-033-0037-0014 կադաստրային ծածկագրից բնակավայրերի նպատակային նշանակության 0.04202 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի 1989թ. կառուցված 45.99 քմ. բնակելի տուն և 3.96 քմ. բաց պատշգամբի նկատմամբ համաձայն հավելվածի:
2.Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
3.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4.Հողամասում առկա է 1990թ. ինքնակամ կառուցված 9.84քմ. մառան, 0.82 քմ. ինքնակամ կառուցված պարիսպ, 0.28 քմ. ինքնակամ կառուցված պարիսպ, 0.71 քմ ինքնակամ կառուցված պարիսպ, 1.03 քմ. ինքնակամ կառուցված պարիսպ, 2009թ. ինքնակամ կառուցված 21.2 քմ. մառան:
5.Ուժը կորցրած ճանաչել Դարպաս համայնքի ղեկավարի 22.05.2020թ. թիվ 44 որոշումը:
6.Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ 2 փող., 6 նրբ., թիվ 10:
7.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

12 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 50

Ա.Կ.ՏԵՐ-ՄԱԿԱՐՈՎԱՅԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158, 159, 161 հոդվածներով , ՀՀ կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1384-Ն որոշումով, 219 հոդվածի 1 կետի 2-րդ մասով և հիմք ընդունելով Ա.Կ.Տեր-Մակարովայի դիմումը՝

Որոշում եմ.

1.Դարպաս համայնքի «Կրթամարզամշակույթային համալիր» համայնքային ոչ առև-տրային կազմակերպության տնօրեն՝ Աննա Կոնստանտինի Տեր-Մակարովային տրա-մադրել 2020 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն և լրացուցիչ արձակուրդները ս/թ հունիսի 15-ից մինչև հուլիսի 16-ը ներառյալ՝ 24 աշխատանքային օր:

2.Ա. Տեր-Մակարովային հիմնական արձակուրդային վճարից բացի վճարել լրացուցիչ միանվագ դրամական պարգևատրում՝ մեկ ամսվա աշխատավարձի չափով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**